«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա ՝ «Նախադպրոցական կրթության պետական չափորոշիչը և կերպարվեստի մեթոդիկային ներկայացվող պահանջները»

Հաստատություն ՝ № 152 Մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ

Դաստիարակ ՝ Նելլի Ասոյան

Ղեկավար ՝ ժաննա Ավետիսյան

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ…….....2

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ…….……..3

ԳԼՈՒԽ 1.ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ

ԳԼՈՒԽ 1.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ……4

ԳԼՈՒԽ 1.2 ՉԱՓՈՐՈՇՉԻ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷՈՒԹՅՈՒՆԸ…….6

ԳԼՈՒԽ 1.3 ՉԱՓՈՐՈՇՉԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ……...8

ԳԼՈՒԽ 1.4 ՉԱՓՈՐՈՇՉԻ ՈՐԱԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԸ…….10

ԳԼՈՒԽ 2.ԿԵՐՊԱՐՎԵՍՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ…….11

ԳԼՈՒԽ 2.1 ԿԵՐՊԱՐՎԵՍՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐ ԽՄԲԵՐՈՒՄ……12

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՊԼԱՆ-ԿՈՆՍՊԵԿՏԻ ՕՐԻՆԱԿ……...

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……...

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի թեման է՝ «Նախադպրոցական կրթության պետական չափորոշիչը և կերպարվեստի մեթոդիկային ներկայացվող պահանջները»:Աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել «նախադպրոցական կրթության պետական չափորոշիչը» և ներկայացնել կերպարվեստի մեթոդիկային ներկայացվող պահանջները:

Աշխատանքի խնդիրներն են՝

- Ներկայացնել Նախադպրոցական պետական չափորոշչի ընդհանուր դրույթները,
- Ուսումնասիրել Նախադպրոցական պետական չափորոշչի ընդհանուր էությունը,
- Ուսումնասիրել Նախադպրոցական պետական չափորոշչի կառուցվածքը և գործառույթները,
- Ուսումնասիրել չափորոշչի որակական պահանջները և ակնկալիքները:
- Ուսումնասիրել կերպարվեստային գործունեության մեթոդիկան
- Դիտարկել նկարչությունը տարիքային տարբեր խմբերում

Աշխատանքի արդիականությունը կայանում է նրանում,որ նախադպրոցական տարիքի երեխաների ուսուցման և դաստիարակության գործընթացում պետք է հետևողական լինել,թե երեխաների կարողությունները համապատասխանում են տվյալ տարիքային խմբի համար նշված վերջնադրյունքներին,թե ոչ: Յուրաքանչյուր խումբ որքանով է կարողանում տիրապետել կերպարվեստային գործունեության հմտություններին և հնարներին:

ԳԼՈՒԽ 1.ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ

ԳԼՈՒԽ 1.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը (այսուհետ՝ չափորոշիչ) կազմում է վաղ մանկության զարգացման ընդհանուր չափորոշչի բաղադրամաս և սահմանում է նախադպրոցական տարիքի երեխաների կրթական ծրագրերի բովանդակության նախագծման հիմնական ուղղությունները: Չափորոշչում նախադպրոցական կրթության բովանդակությունը ներկայացվում է տարանջատված կրթադաստիարակչական ոլորտ-տիրույթների և բաղադրիչների միջոցով:

Չափորոշիչը նպատակաուղղվում է նախադպրոցական տարիքի երեխայի իմացական շարժառիթների խթանմանը, նրա ինքնաճանաչման, ինքնադրսևորման, համակողմանի ու ներդաշնակ զարգացման ապահովմանը, կենսակերպի հիմքերի ձևավորմանն ու սոցիալականացմանը:

Չափորոշիչը նաև կրթադաստիարակչական հիմնական ծրագրերի նպատակների իրագործումը ցույց տվող ցուցանիշների կատարման ընդունված մակարդակն է:

Չափորոշիչը մշակվում է համագործակցային աշխատանքի արդյունքում և հաստատվում շահագրգիռ կողմերի համաձայնությամբ: Այն ներառում է ընդհանուր սկզբունքներ կամ գործունեության տարբեր տեսակներին ու արդյունքներին վերաբերող բնութագրեր, որոնք ուղղված են կարգավորելու հաջողությունների առավել լավորակ աստիճանը որոշակի իրադրության մեջ:

Չափորոշիչը երեխայակենտրոն կրթության հիմք է հանդիսանում:

Չափորոշիչը հնարավորություն է ընձեռում արձագանքելու երեխաների կարիքներին և հետաքրքրություններին, հարգելու յուրաքանչյուր երեխայի անձը և զարգացնելու ուժեղ կողմերը, խթանելու համատեղ ուսումնառության գործընթացը:

Չափորոշիչը որոշակի է, չափելի, հասանելի, իրատեսական, համապարփակ և ժամկետային:

Ըստ չափորոշչի, մշակվում են միջին և բարձրագույն մասնագիտական հաստատությունների նախադպրոցական ֆակուլտետների (բաժինների) ուսումնական ծրագրեր և վերապատրաստումների թեմատիկ պլաններ, ծնողական կրթության ծրագրեր:

Չափորոշչի հիման վրա մշակված նախադպրոցական կրթական ծրագրերի ներդրումը պարտադիր է նախադպրոցական ուսումնական հաստատությունների համար:

Նախադպրոցական բոլոր տարիքային խմբերի երեխաների կրթության և խնամքի չափորոշիչների սահմանումը ապահովում է կրթական քաղաքականության միասնականությունը և հաջորդայնությունը:

ԳԼՈՒԽ 1.2 ՉԱՓՈՐՈՇՉԻ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Չափորոշիչը մշակվում է կրթության մասին ՀՀ օրենսդրության, «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 13-ի N 10 արձանագրային որոշման, վաղ մանկական տարիքի երեխայի զարգացման հայեցակարգի և նախադպրոցական կրթության բարեփոխումների ռազմավարական ծրագրերին համապատասխան:

«Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի դ) ենթակետի պահանջների համաձայն՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը մշակում, հաստատում և ներդնում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը:

Չափորոշիչը նորմատիվ է, որը սահմանում է երեխայի զարգացման, կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, երեխաների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը և երեխաներին ներկայացվող որակական պահանջները:

Չափորոշչին համապատասխան՝

- ստեղծվում է երեխաների անվտանգության, խնամքի, զարգացման ու կրթության համար անհրաժեշտ միջավայր, այդ թվում՝ սանիտարահիգիենիկ ու շենքային և այլ պայմաններ, որոնց նվազագույն չափանիշները հաստատվում են պետական կառավարման համապատասխան մարմինների կողմից,
- մշակվում են նորմատիվ ակտերի նախագծեր, նախադպրոցական կրթության ծրագրեր, ուսումնամեթոդական փաստաթղթեր և նյութեր, այդ թվում՝ երեխաների ծնողների և խնամողների համար երաշխավորություններ, ուղեցույցներ, հանրամատչելի գրքույկներ, պատրաստվում են հեռուստատեսային և ռադիոհաղորդումներ և այլն,
- ստեղծվում են համապատասխան որակավորում շնորհող միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրեր ու պլաններ,

- իրականացվում է նախադպրոցական կրթության բնագավառում աշխատող ղեկավար, մանկավարժական կադրերի ու սպասարկող անձնակազմի, մասնագիտական կատարելագործումը և ատեստավորումը,
- նախագծվում և արտադրվում են երեխաների տարիքային ու ֆիզիոլոգիական առանձնահատկություններին համապատասխան ուսումնական և կենցաղային գույք, խաղալիքներ, դիտողական պարագաներ, իրականացվում է դրանց փորձաքննությունը,
- ուսումնասիրվում, վերահսկվում և գնահատվում է նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների գործունեությունը,
- դիտարկվում, որոշվում է երեխայի ֆիզիկական, մտավոր, հուզական (էմոցիոնալ) զարգացման ընթացքն ու մակարդակը,
- իրականացվում է պետական, համայնքային, ոչ պետական ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական հագեցվածության ապահովումը,
- իրականացվում է նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող կրթադաստիարակչական կազմակերպությունների լիցենզավորումը,
- սահմանվում է երեխաների մտավոր և ֆիզիկական բեռնվածության համամասնությունը:

Երեխայի բեռնվածությունը փոխկապակցվում է կրթության բովանդակության, ուսուցման ձևերի, մեթոդների ու եղանակների, մանկապարտեզի աշխատանքային ժամակարգի, երեխայի տարիքային, անհատական առանձնահատկությունների և հնարավորությունների հետ:

ԳԼՈՒԽ 1.3 ՉԱՓՈՐՈՇՉԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ

Չափորոշիչը ներառում է՝

- կրթադաստիարակչական հիմնական բնագավառները, ուղղությունները և բովանդակության բաղադրիչները,
- երեխաներին ներկայացվող ընդհանուր կրթական պահանջները և նրանցից ունեցած ակնկալիքները, ըստ զարգացման սահմանված տարիքային խմբերի,
- կրթական հիմնական բնագավառները, ուղղությունները, և բովանդակության բաղադրիչների սահմանման հոգեբանամանկավարժական սկզբունքները,
- երեխաների ուսումնական, խաղային բեռնվածության երաշխավորվող առավելագույն չափը,
- երեխաների զարգացման ընթացքի և առաջադիմության մակարդակի դիտարկման ձևերը,
- նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխայի զարգացնող միջավայրի չափանիշները:

Չափորոշչի հիմնական գործառույթներն են՝

- Հայաստանի Հանրապետությունում նախակրթության կազմակերպման և իրականացման նկատմամբ միասնական պետական քաղաքականության ապահովում
- նախադպրոցական կրթության, նախադպրոցական տարիքի երեխաների ուսումնառության հիմնական բովանդակության և բեռնվածության սահմանումը,
- նախադպրոցական կրթության, մատուցվող այլընտրանքային կրթական ծառայությունների և ծնողական կրթության որակի բարելավումը,
- նախադպրոցական կրթության հումանացումը, կրթական նպատակների համապատասխանեցումը երեխաների զարգացման առանձնահատկություններին, նախասիրություններին, երեխայակենտրոն ուսուցման ու դաստիարակության ապահովումը,
- վաղ մանկական զարգացման ու կրթության սահուն, լիարժեք շարունակականության ապահովումը,
- նախադպրոցական կրթության իրականացման գործընթացի և արդյունքների վերահսկողության և նախադպրոցական ուսումնական հաստատությունների,

դրանց աշխատակազմերի գործունեության գնահատման հիմքերի ապահովումը,

- չափորոշիչը նպատակաուղղված է նախադպրոցական կրթության արդիական այնպիսի մեթոդների ընտրությանը, որոնք հնարավորություն կընձեռեն ուսումնառության գործընթացը կազմակերպել ոչ միայն ամբողջօրյա ու շուրջտարյա ժամակարգով և ավանդական եղանակներով, այլև իրականացնել կարճատև, սեզոնային և այլընտրանքային կրթական ծառայություններ,
- չափորոշիչը խրախուսում է տարբերակված, անհատակողմնորոշիչ, երեխայակենտրոն դաստիարակությունը և ուսուցումը, ինչը հիմնված է երեխայի անհատականության ճանաչման, փոխըմբռնման, երեխայի անձը հարգելու, նրա դիրքում կանգնելու, նրա տեսակետը հաշվի առնելու, զգացմունքներն ու հույզերը չանտեսելու մոտեցումների վրա,
- չափորոշիչն ամրագրում է բովանդակության անհրաժեշտ, ստորին թույլատրելի նվազագույն սահմանը և ներառում է հոգեբանական նախապատրաստության, սոցիալական, ճանաչողական-իմացական և առողջապահական ուղղությունները:

ԳԼՈՒԽ 1.4 ՉԱՓՈՐՈՇՉԻ ՈՐԱԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԸ

Չափորոշչի որակական պահանջները սահմանվում են՝ ըստ տարիքային խմբերի և ըստ զարգացման ոլորտների և կրթության բովանդակության բաղադրիչների:

- վաղ տարիքի առաջին խումբ- 2 ամսականից մինչև 1 տարեկան,
- վաղ տարիքի երկրորդ խումբ - 1 տարեկանից մինչև 2 տարեկան,
- կրտսեր առաջին խումբ-2 տարեկանից մինչև 3 տարեկան,
- կրտսեր երկրորդ խումբ- 3 տարեկանից մինչև 4 տարեկան,
- միջին խումբ-4 տարեկանից մինչև 5 տարեկան
- ավագ խումբ-5 տարեկանից մինչև 6 տարեկան.

Չափորոշիչը նախագծվել է որպես մեկ ամբողջական փաստաթուղթ՝ պահպանելով շարունակականության ու հաջորդայնության սկզբունքները և կառուցողականության մոտեցումը, ինչպես նաև, արդեն իսկ հաստատված, հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և միջնակարգ կրթության պետական չափորոշչի պահանջները (ՀՀ կառավարության 8 ապրիլի 2010 թվականի N 439-Ն որոշում):

8. Ակնկալիքները՝

1) նախադպրոցական համակարգի կրթական ոլորտի զարգացում և նորացում,

2) բազմաֆունկցիոնալ կրթական հաստատությունների տարբերակված կրթական ծրագրերի միասնական հենքային դաշտի ստեղծում,

3) անձնավորության ձևավորման նպաստում,

4) զարգացնող առարկայական միջավայրի ապահովում,

5) կադրերի մասնագիտական որակի կատարելագործում, վերապատրաստման աշխատանքի ձևերի և մեթոդների նորացում:

ԳԼՈՒԽ 2.ԿԵՐՊԱՐՎԵՍՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

Նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության համակագարգում իր կայուն տեղն է զբաղեցնում գեղագիտական դաստիարակությունը։Այն նպաստում է նախադպրոցականի հուզական ոլորտի զարգացմանը և զգայական ոլորտի զարգացմնը և զգայական փորձի հարստացմանը։

Գեղագիտական դաստիարակության բնագավառում կարևոր տեղ է զբաղեցնում կերպարվեստային գործունեությունը,որը որոշիչ նշանակություն ունի նախադպրոցականի ներդաշնակ զարգացման գործընթացում։

Կրտսեր նախադպրոցական տարիքի երեխաների կերպարվեստային գործունեության հիմնական նպատակը կերպավորման շարժումների յուրացումն է։Նրանք ուսումնասիրում են առարկայի արտաքին տեսքը,դիտում են,զննում, շոշափում,ձեռք են բերում առարկայի ձևը զգալու և այն հաղորդելու հմտություն։

Զբաղվելով կերպարվեստային գործունեությամբ երեխաները հնարավորություն են ունենում գեղագիտական ստեղծագործություններով արտահայտելու իրենց ըմբռնումները և վերաբերմունքը շրջակա առարկաների ու երևույթների նկատմամբ։Նկարչությունը նախադպրոցական տարիքում գրավոր հաղորդակցման միակ ձևն է։

ԳԼՈՒԽ 2.1 ԿԵՐՊԱՐՎԵՍՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐ ԽՄԲԵՐՈՒՄ

Կրտսեր 2րդ խմբում կերպարվեստային գործունեության հիմնական նպատակն է՝

- Զարգացնել երեխաների գեղարվեստաստեղծագործական ունակությունները,

- Երեխաներին սովորեցնել կերպարվեստի այբուբենը՝ գծանկարի,գունանկարի,ապլիկացիայի,
- Ծեփակերտման,դեկորատիվ,կիրառական աշխատանքի, հիմունքներ,
- Նկարչություն բնօրինակից՝ հիշողությամբ և երևակայությամբ,դրա հիման վրա երեխաների տեսողական հիշողության,տարածական պատկերացումների և ստեղծագործական երևակայության զարգացում,
- Առաջացնել հետաքրքրություն նկարչության, ծեփի, ապլիկացիայի, կառուցողական աշխատանքների նկատմամբ,
- Ձևավորել՝ առարկայի ձևը,գույնը տեսնելու,զգալու և վերարտադրելու կարողություն,
- Երեխաների մեջ զարգացնել գեղեցիկի ընկալումներ,գեղագիտական զգացմունքներ,պատկերացումներ,
- Երեխաներին մերձեցնել արվեստին՝նրանց փոխանցելով գեղագիտական տարրական գիտելիքներ և գործնական հմտություններ
- Ձևավորել երեխաների գեղագիտական ճաշակը և նպաստել,որ ինքնուրույն գնահատեն արվեստի գործերն ու կյանքի երևույթները
- Երեխաների գեղագիտական ընկալման ,գեղագիտական ճաշակի,իրականության երևույթների ու առարկաների նկատմամբ հուզական - զգայական վերաբերմունքի զարգացումը

Կերպարվեստային գործունեության որոշ նրբությունների յուրացումը և երեխաների ստեղծագործական կարողությունների զարգացումը պահանջում են անհրաժեշտ որոշակի պայմանների բավարարում։

Կրտսեր 2-րդ խմբի տարեվերջում նկարչությունից երեխաները պետք է կարողանան՝

- Ճանաչել և անվանել նկարչական նյութերը,միջոցները,երկրաչափական պատկերները,

- Պատկերել առանձին առարկաներ,պարզ բովանդակություն ունեցող կոմպոզիցիաներ,
- Ընտրել պատկերվող առարկաներին համապատասխան գույներ,
- Ճիշտ օգտագործել մատիտը,վրձինը,ջրաներկը և մարկերը,
- Մատիտը ծայրին մոտ բռնել ձեռքի առաջին 3 մատներով,
- Տեսակավորել առարկաներն ըստ գույնի,
- Անվանել հիմնական գույները։
- Ընտրել 2-4 գույն,
- Ճանաչել 2 երկրաչափական պատկերներ՝ շրջան,եռանկյուն,
- Նկարել լսած հեքիաթից իրեն դուր եկած պատկերը։

Միջին խմբի երեխաների շրջանում պետք է շարունակել ձևավորել առանձին առարկաներնկարելու հմտություններ և այդ առարկաների պատկերները կրկնելով ստանալ թեմատիկ կոմպոզիցիաներ։

Երեխաների ուշադրությունը հրավիրել առարկաների՝ միմյանց նկատմամբ հարաբերությանը,ըստ բարձրության.օրինակ՝ծառերը բարձր են,թփերը՝ցածր,իսկ ծաղիկներն ավելի ցածր են։

Ձևավորել պատկերացումներ նոր գույների ստացման վերաբերյալ։Իրենց արդեն հայտնի ֆույներից երեխաները կարող են ստանալ նարնջագույն,շագանակագույն,բաց կանաչ և այլն։

Նկարել բնօրինակից մտահաղացմամբ և երկարությամբ պատկերել պարզ թեմաներ,ընդգծելով առարկաների հիմնական հատկանիշները։

Ձևավորել նկարելու հմտություններ՝ զարգացնելով մանր մոտորիկան։

Կիրառել ոչ ավանդական մեթոդներով նկարելու հնարներ։

Տարեվերջին երեխաները պետք է կարողանան՝

- Ճանաչել,տարբերել, անվանել և նկարել երկրաչափական պատկերներ։
- Ընտրել և օգտագործել տարբեր գույների՝կարմիր,դեղին,կանաչ,կապույտ,սև,սպիտակ, շագանակագույն և այլն,

- Հստակ վերարտադրել առարկաներն ու երևույթները օգտվելով ծանոթ արտահայտչամիջոցներից,
- Կոկիկ և խնամքով երանգավորել պատկերվող առարկան,օգտագործել տարբեր նյութերմ

Ավագ խմբի կերպարվեստային գործունեության խնդիրներն են՝

- Զարգացնել 5-6 տարեկան երեխաների գեղարվեստա-ստեղծագործական ունակությունները,
- Երեխաների մեջ ամրապնդել և կատարելագործել կերպարվեստային գործունեության այբուբենը,
- Երեխաների մեջ կերպարվեստի նկատմամբ սիրո և հոտաքրքրության ձևավորումը,
- Նպաստել երեխաների անհատականության զարգացմանը:

Խումբ ՝ *Միջին*

Մեթոդիկա ՝ *Կերպարվեստ՝ Այլընտրանքային նկարչություն*

Թեմա ՝ *Մկեր*

Դաստիարակ ՝ *Ն.Ասոյան*

Տնօրեն ՝ *Ա.Զաքարյան*

ԵՐԵՎԱՆ 2023

Անհրաժեշտ պարագաներ՝

գուաշներ,վրձիններ,բամբակյա փայտիկներ,փայտիկի վրա ամրացված ընկույզի կեղևներ

Նպատակը՝

- Համակարգել երեխաների գիտելիքները և պատկերացումները սնկերի, դրանց բազմազանության մասին,
- Սովորեցնել դասակարգել սնկերն ըստ տեսակների,
- Սովորեցնել այլընտրանքային եղանակով ստանալ սունկ,
- Զարգացնել երևակայությունը,հարստացնել բառապաշարը։

ՏԵՍԱՐԱՆ՝

Դահլիճը զարդարված է աշնանային,անտառային տեսարանով։Մյուս կողմում աշխատանքային մասն է,որտեղ երեխաները պետք է աշխատեն։Վարագույրը բացվում է <<Пешки ложки>> երաժշտության ներքո,երեխաները կանգնած են իրենց գորգերի առջև,դադարում է երաժշտությունը։

Ընթացքը՝

Երեխաները ողջունում են հյուրերին՝

Մի գլխանի,մի ոտանի
Սնկիկներն ենք անտառի,
Ողջունում ենք մենք ձեզ սիրով,
Ուրախ երգով մեր խոսքով։

Երբ երեխաները նստում են բարձերի վրա,լսվում է ձայն։

Երեխաներ դուք էլ եք լսում։Այս ի±նչ ձայն է,որտեղի±ց է։Գտնում են տուփ։Բացում են՝ մեջը ոզնի։զնին շարունակում է ձայն արձակել։

Երեխաներ,ոզնին ասում է,որ նա շատ քաղցած է և խնդրում է,որ իրեն կերակրենք։ Օգնե±նք,կերակրենք ոզնուն։

-Այո

-Ապա եկեք տեսնենք,թե ինչպիսին է ոզնին։

-Ոզնին փշոտ է։

-Ոզնին ինչպիսի± կենդանի է։

-Ոզնին վայրի կենդանի է։

-Ոզնին ի±նչ է շատ սիրում։

-Ոզնին սիրում է սունկ։

-Ե±րբ են աճում սնկերը։

-Սնկերն աճում են անձրևից հետո։

-Իսկ ամենաշատ սնկերը որտե±ղ են աճում։

-Ամենաշատ սնկերն աճում են անտառում։

-Սնկերը քանի± տեսակ են լինում։

-Սնկերը լինում են թունավոր և ուտելի։

-Ի±նչ թունավոր սնկի անում գիտեք։

-Մուխամոր

-Իսկ ուտելի։

-Շամպինյոն կամ ագարիկոն։

-Մուխամորն ամենագեղեցիկ սունկն է,բայց միևնույն ժամանակ նաև ամենաթունավորն է։ Իսկ դուք գիտեք,թե ինչու± այդքան վառ արտայահտված կարմիր գույն ունի։

-Ունի կարմիր գույն,որպեսզի մարդիկ և կենդանիները զգուշանան։

-Իսկ սունկն ինչե±ր ունի։

-Ունի գլխիկ,պոչիկ և արմատներ։

Իսկ հիմա ժամանակն է,որպեսզի ոզնու համար սուննկ պատրաստենք։Ես ձեզ ցույց կտամ ձևը և դուք հետևելով իմ օրինակին կպատրաստեք այն։Ընկույզի կեղևը նախ պետք է ներկենք կարմիր գույնով,ապա սպիտակով ավելացնենք կետիկները։

Որպեսզի կարողանանք լավ աշխատել նախ եկեք մարզենք մատիկները։

Մարզենք,մարզենք մատիկները,

Որ լավ գունավորենք սնկիկները,

Որ մեր ոզնին ուրախանա

Եվ ժպիտով անտառ գնա։

Իսկ հիմա պետք է մոտենանք սեղաններին և սկսենք աշխատել։

Աշխատանք։(Ընթացքում միացնել երաժշտություն)։

Երեխաներ,մինչ աշխատանքները մի փոքր կչորանան եկեք մի երգ երգենք միասին։

Երգից հետո՝ երեխաներ եկեք հիմա շարունակենք և սպիտակ կետիկներ ավելացնենք սնկիկների վրա,որպեսզի մեր աշխատանքները ավարտուն տեսք ունենան։

Ապրեք երեխաներ։Իսկ հիմա եկեք ուրախ ժպիտով ճանապարհենք ոզնուն,իսկ նա սնկերը կդասավորի իր մեջքի վրա և կհյուրասիրի նաև իր ընկերներին,քանի որ սնկերը շատ են։

-Վայ երեխաներ,տեսեք ոզնին ձեզ համար ևս նվեր է պատրաստել և քաղցր սնկեր է բերել։Եկեք միասին շնորհակալություն հայտնենք ոզնուն և ասենք ցտեսություն։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի թեման էր ՝ «Նախադպրոցական կրթության պետական չափորոշիչը և կերպարվեստի մեթոդիկային ներկայացվող պահանջները»:Աշխատանքի նպատակն էր՝ ուսումնասիրել «նախադպրոցական կրթության պետական չափորոշիչը» և ներկայացնել կերպարվեստի մեթոդիկային ներկայացվող պահանջները:

Աշխատանքի ընթացքում մենք լուծեցինք մեր առջև դրված հետևյալ խնդիրները՝

- Ներկայացրեցինք նախադպրոցական պետական չափորոշչի ընդհանուր դրույթները,
- Ուսումնասիրեցինք նախադպրոցական պետական չափորոշչի ընդհանուր էությունը,
- Ուսումնասիրեցինք նախադպրոցական պետական չափորոշչի կառուցվածքը և գործառույթները,
- Ուսումնասիրեցինք չափորոշչի որակական պահանջները և ակնկալիքները:
- Ուսումնասիրեցինք կերպարվեստային գործունեության մեթոդիկան
- Դիտարկեցինք նկարչությունը տարիքային տարբեր խմբերում

Այսպիսով աշխատանքի ընթացքում պարզ դարձավ,որ մինչև 6 տարեկան երեխաների զարգացման չափորոշիչները կարող են տարբեր կիրառություններ ունենալ:Մասնավորապես՝

- Բարելավել ուսուցումը՝ հիմք հանդիսանալ մինչև 6 տարեկան երեխաների ուսումնական ծրագիրը բարելավելու համար,
- Բարելավել ծնողավարության հմտությունները և վարքը,օգնել ծնողներին իրատեսական ակնկալիքներ ունենալ մինչև 6 տարեկան երեխաներից,
- Գնահատել նախադպրոցական ծրագրերի արդյունավետությունը,հիմք հանդիսանալ ընտրելու կամ մշակելուհամար երեխաների առաջընթացի գնահատման միջոցներ և այլն…

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Լ.Սմբատյան,Լ.Սարգսյան-Կերպարվեստի պարապմունքները մանկապարտեզի միջին խմբում Երևան 2013

2.Մանկապարտեզի կրտսեր 2-րդ խմբի համալիր ծրագիր 3+,Երևան 2011

3. Մանկապարտեզի միջին խմբի համալիր ծրագիր 4+,Երևան 2011

4. Մանկապարտեզի ավագ խմբի համալիր ծրագիր,Երևան 2011

Նախադպրոցական կրթության պետական չափորոշիչներ,Երևան 2018

5. Ս.Ա.Մարության,Ա.Մ.Դալլաքյան «Նախադպրոցական մանկավարժություն» 126 էջ

6. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=67889

7. https://escs.am/am/static/preschool-sdication?s=edu

8. https://www.arlis.am/documentview.aspx?docid=152575